http://www.profikon.am
https://www.facebook.com/profikon.am/

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

------ ---------- N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N846-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 26-ի N1325-Ն ու 2005 թվականի հունիսի 1-ի N946-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N846-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման N1 հավելվածի՝

ա. 13-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.) օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների)՝

ա. ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 11-ի N1406-Ն որոշմամբ հաստատված արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքը և այդ դիրքում ներառված՝ փաստացի վաճառված ապրանքի անվանումը,

բ. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N875-Ն հրամանով հաստատված՝ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) (այսուհետ՝ դասակարգիչ) 4-րդ աստի-

ճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ծառայության կոդը (4 նիշը) և այդ կոդում ներառված՝ փաստացի մատուցված ծառայության անվանումը:

Սույն ենթակետի կիրառության իմաստով, եթե հարկ վճարողի իրացումից հասույթը որևէ տարվա արդյունքներով գերազանցել է 58.35 մլն դրամի շեմը, ապա այդ պահից սկսած՝ կիրառվում է սույն ենթակետով սահմանված պահանջը՝ անկախ հարկ վճարողի՝ հետագա տարիների իրացումից հասույթի մեծությունից.»,

բ. 13-րդ կետի 20-րդ ենթակետում «կանխավճարների ստացման,» բառերը փոխարինել «կանխավճարների ստացման, ապրանքի հանձնումից կամ ծառայության մատուցումից հետո վճարումների ընդունման, ինչպես նաև» բառերով,

գ. 13.1-րդ և 13.2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել,

2) որոշման N2 հավելվածի՝

ա. 40-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի չմուտքագրումը կամ արժեքից ցածր արժեքի մուտքագրումը.

4) գնված ապրանքի քանակի չմուտքագրումը կամ դրանից փոքր քանակի մուտքագրումը՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար.»,

բ. 40-րդ ենթակետի 5-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

գ. 40-րդ ենթակետը լրացնել նոր 5.1-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքում չներառված ապրանքի անվանման տպագրումը,

բ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչով սահմանված ծառայության կոդում (4 նիշում) չներառված ծառայության անվանման տպագրումը,»,

դ. 40-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) ՀԴՄ-ի ծրագիրն արտաքին (առևտրային) ծրագրերի հետ ինտեգրած՝ նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար՝

ա. ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքի անվանման ԱՏԳ ԱԱ 4 նիշին համապատասխան ապրանքային դիրքից տարբերվող ԱՏԳ ԱԱ այլ դիրքում ներառված ապրանքի անվանման վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին.

բ. ՀԴՄ-ի կտրոնի վրա ստացված ծառայության անվանման դասակարգչի համապատասխան կոդից (4 նիշից) տարբերվող ծառայության անվանման վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:»,

ե. 41-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2) որոշման N1 հավելվածի 13-րդ կետի 9-րդ և 10-րդ ենթակետերում նշված տվյալների բացակայությունը՝ «կանխավճար» գրառում ունեցող ՀԴՄ կտրոնների համար.»,

զ. 41-րդ կետի 2.1-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի մայիսի 1-ից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա», 2-րդ ենթակետի «գ», «դ» պարբերությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության 01.08.2013թ. N846-Ն որոշման համաձայն, ապրանքի (ծառայության) անվանումը ՀԴՄ կտրոնի վրա տպագրում են 2013 թվականի արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողները: ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանման տպագրումը 2016 թվականի մայիսի 1-ից պարտադիր է նաև 2013 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար, 2014 թվականի կամ 2015 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար: Ընդ որում, 2016 թվականի մայիսի 1-ից ՀԴՄ-ի կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը) նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից լրացվելու է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N875-Ն հրամանով հաստատված՝ արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) (այսուհետ՝ դասակարգիչ) 4-րդ աստիճանին համապատասխան՝ ըստ դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի (4 նիշ):

Վերը նշված դասակարգչով սահմանված ապրանքների և ծառայությունների դասերի 4 նիշը չի ներառում ապրանքների և ծառայությունների մանրամասնեցված անվանումներ, ինչն էլ հնարավորություն չի տալիս իրականացնել համապատասխան վերլուծություններ՝ փաստացի իրացված ապրանքների տեսականու, գների, քանակի վերաբերյալ: Վերջինս էլ, իր հերթին, հնարավորություն չի տալիս կոնկրետ ապրանքատեսակների մասով ունենալ հարկ վճարողի՝ ՀԴՄ-ով արձանագրված իրացման շրջանառության իրական պատկերը:

Այդ առումով, նախագծով առաջարկվում է, նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների

համար նշված դասակարգչի 4 նիշը կիրառել միայն ծառայությունների անվանումների մասով, իսկ ապրանքների համար կիրառել ԱՏԳ ԱԱ դասակարգչի 4 նիշը:

Միաժամանակ, նախագծով առաջարկվում է, որպեսզի նախորդ տարվա արդյունքներով մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից ՀԴՄ կտրոնի վրա չտպագրվի ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը), գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը:

Նախագծով առաջարկվում է նաև ապրանքների (ծառայությունների) դասակարգման առումով, ՀԴՄ կտրոնի վրա նշել համապատասխան կոդը:

Վերը նշված փոփոխություններն առաջարկվում է կիրառել 2016 թվականի օգոստոսի 1-ից:

Վերոնշյալ փոփոխությունների հետ կապված, նախագծով նաև հստակեցվել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման դեպքերը:

Միաժամանակ, նախագծով առաջարկվում է կարգավորել նաև վաճառված ապրանքների հանձնումից կամ ծառայության ստացումից հետո կատարվող վճարումների արտացոլումը ՀԴՄ կտրոնի վրա:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Որոշման նախագծով առաջարկվում է նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար ՀԴՄ կտրոնի վրա ապրանքների (ծառայությունների) անվանումը տպագրել, համապատասխանաբար, ԱՏԳ ԱԱ և ԱԴԳՏ դասակարգիչներով սահմանված 4 նիշերին համապատասխան: Միաժամանակ, առաջարկվում է նախորդ տարվա արդյունքներով մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների կողմից ՀԴՄ կտրոնի վրա չտպագրել ապրանքի (ծառայության) անվանումը (տեսակը), գնվող ապրանքի քանակը և դրա չափման միավորը:

Նախագծով հստակեցվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման դեպքերը, ինչպես նաև ՀԴՄ կտրոնի վրա վաճառված ապրանք-

ների հանձնումից կամ ծառայության ստացումից հետո կատարվող վճարումների արտացոլումը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

ԱՏԳ ԱԱ և ԱԴԳՏ դասակարգիչներով սահմանված 4 նիշերին համապատասխան, համապատասխանաբար, ապրանքի և ծառայության անվանման տպագրումն է ՀԴՄ կտրոնի վրա նախորդ տարվա արդյունքներով 58.35 մլն դրամ և ավելի հասույթ ունեցող՝ օրվա ընթացքում հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելու հնարավորություն ընձեռող հսկիչ-դրամարկղային մեքենա կիրառող հարկ վճարողների համար, իսկ նախորդ տարվա արդյունքներով մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար՝ ՀԴՄ կտրոնի վրա ապրանքի (ծառայության) անվանման, գնվող ապրանքի քանակի և դրա չափման միավորի տպագրության պահանջի վերացումն է:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացման կամ նվազեցման մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: